Գերապայծառ և Գերայարգ Աբբա Հօրդ վերուն
Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածաբան վարդապետի

Բազմաւ յարգութեամբ և ըղձալից փափագանօք ի հեռաստանէ աստի իբրև ի մօտոյ զքղանցս սրբազանից զգեստուց տեառնդ իմոյ վերոյ գրեցելոյ համբուրեմ. յայտ լիցի, զի մարտի 19. գրեալ տէրութեանդ գիրն ժամանեաց ինձ, և ես գրեցի պատասխանին, ապրիլի 15. արդ այժմ բնակութիւնս փոխեցինք. մին յարմար Նամսէի տուն քիրայեցի. ամիսն մին ոսկի. յեսայի սպասաւորն քովս է, ոչ կամեցաւ ուրեք գնալ. միայն ուտելիքն տամ և ոչ այլ ինչ, զի Ջանա թէ զբան ինչ ուսանիլ. ես հինգ տղայ այլ հայոց քով կարդան. մեր ժողովուրդքն առաջակայքն և մեծ մասն տեղս բնակին. նշան երևա թէ տեղս մնալոց են. զի Ջան էգիզն ունի կամք իւր ընտանիքն վենաու բերել աստ. աստուծոյ գոհութիւն, ընդ ժողովրդեան սիրով վարինք. և ոչ գոյ այլ և այլ բան. այլևս զկնի զատկիս տեղոյս եկեղեցւոյ ֆօն ունիր մեծ հարկաւորութիւն գնալոյ առ եպիսկոպոսն տեղւոյս, քանզի նոր եկեղեցի սկսեցին շինել. ասեն մեզ թէ փոքր եկեղեցին ձեզ կուտանք. ես ինձ ստիպեաց թէ զքեզ հետս տանիմ առ եպիսկոպոսն. վասն այնորիկ գնացինք ի միասին. գոյր ընդ մեզ փալկօն, որ տաճկէվար լաւ գիտէր, ես նոցա լուզուն։ Եւ երբ տեսաւ զիս յոյժ սիրով ընդունեաց. երեք օր մնացինք. հացի ժամանակն հանապազ տարաւ ի սեղան իւր. ես առաւօտն տանիր զահվայ խմելու. ես իմ վկայական[ն]երս կարդաց ես ինքն. մին լաւ վկայական գիր տուաւ ոչ թէ միայն Վարատինու վերայ այլ և բոլոր մաճառիստանու։ Քանզի ինքն մեծ նշանաւոր արհի եպիսկոպոս է նաևս, Վարատինու մինչև եպիսկոպոսին քաղաքն. երկու աւուր փոստի ճանապարհ է. մին փող ես ոչ խարճեցի, այլ ֆօն տարաւ զիս. բայց մին փոքր ընծայ ես տարայ եպիսկոպոսին. ես յոյժ մարմնաւոր հարուստ է. ես այլոց եպիսկոպոսաց վերայ իշխէ։ Դարձեալ մեր հայր միքայէլէն գիր ոչ ունիմ. կարծեմ թէ գնացեալ է անտի. այլ ես մերայնոց սիրով ողջոյն մատուցանեմ և յաղօթս խնդրեմ։

Գերյարգութեան քում պատրաստական ամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

1740
մայիսի 20
ի Վարատին

ՂԷ.

Եր. Տէր Կոմիտաս Քահանային մասին կը ներկայացնենք հոս հետաքրքրական թուղթ մը, զոր ժամանակին գրեր է Մխիթարեան Նորընծայ քահանայ մը առ իւր ծնողքը, որոնք ժամանակակից են ու ծանօթութիւն ունին եղեր Վկային հետ։ Սակայն մեր նամակագրէն պիտի չսպասենք նորութիւն. այնու հանդերձ մենք կը համարինք որ պարունակուած հարցումներու շարակարգութիւնը ինչ ինչ տեսակէտով ընթերցողաց մանաւոր ուշադրութիւնը պիտի գրգռէ։

Բարեպաշտօն և բարեկրօն ծնողաց իմոց տիրացու Անանիային և Որբուհի խարուհին և քրիստոսասէր հանուոյ իմոյ՝ իսօնձայ խարուհ տանտիկնոջն

. . . Իսկ թէ զուսմանէ մերմէ գիտել կամիցիք, աւասիկ ողորմութեամբ տեառն աւարտեալ զփիլիսոփայութիւնն, ի պատրաստի եմք յետ շաբաթու միոյ՝ հակառատիլ ընդ ուսումնակից եղբարս մեր զփիլիսոփայութենէ. և ապա եթէ տեառն կամք իցեն, մտանեմք յուսումն աստուածաբանութեան...։ Այլ ի թղթի աստ զայլ ինչ խնդրեմք, որոյ կատարումն մեզ ցնծութիւն, և երանելւոյն տեառն կոմիտասայ վկային՝ պատիւ. վասն